ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանուն Գոռ Ասրյան

2. Զբաղեցրած պաշտոնը Լոռու մարզպետի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները 10.10.2022 - 14.10.2022թթ.

4. Հրավիրող կողմը Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության կողմից ֆինանսավորվող LEADER-ֆորում ծրագրի ղեկավար Ստեփան Նայդերմոսեր

5. Գործուղման նպատակները Ծանոթանալու ՄԱԿ ՊԳԿ Տավուշի եւ Լոռու մարզերում ձեւավորված Տեղական ակտիվ խմբերի անդամներին եվրոպական երկրներում «LEADER» / Համայնքի կողմից առաջնորդվող տեղական զարգացման (ՀԱՏԶ) հայեցակարգի իրականացման փորձի հետ

6. Քննարկված թեմաները Հիմնական թեմաներն են եղել. տեղական ակտիվ խմբերի ձևավորման գործընթացներ, ֆինանսական հոսքերի կառավարում և ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմներ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցելություններ են իրականացվել Ավտրիայի և Սլովենիայի տարբեր տեղական արտադրության ընկերություններ, որոնք ֆինանսավորվել կամ աջակցություն են ստացել ԵՄ ԼԻԴԵՐ ծրագրերի շրջանակներում: Հանդիպումներ են կազմակերպվել Ներքին Ավստրիա վարչական միավորման գյուղատնտեսության, ինչպես նաև Սլովենյայի Պոդրավսկա և Պոմուրսկա նահանգների տարբեր ոլորտների պատասխանատուների հետ, կազմակերպվել են քննարկումներ՝ գյուղատնտեսության, տուրիզմի, ՓՄՁ-ների զարգացման թեմաներով:

Գ.Ասրյանի կողմից ներկայացվել է Լոռու մարզի զարգացման հնարավորությունները, Լոռու մարզի գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ուղղությունները (հողերի, ջրային ռեսուրսների և այլ խնդիրների վերաբերյալ) և ԼԻԴԵՐ ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները, կապված ձևավորված տեղական ակտիվ խմբերի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Քանի որ այցը հիմնականում նպատակաուղղված էր եվրոպական փորձի ուսումնասիրությանը, որևէ որոշում կամ ստորագրված փաստաթղթեր չկան

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ուսումնասիրելով եվրոպական երկրներում տեղական ակտիվ խմբերի աշխատանքները, Գ.Ասրյանի կողմից առաջարկվել է ԼԻԴԵՐ ծրագրի պատասխանատուներին վերանայել մարզում ձևավորված ՏԱԽ-երի կազմերը, առաջարկվել է ծրագրի մարզում տեղայնացման հետ կապված հաշվի առնել մարզի շահառուների մշակութային սովորույթները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը 17.10.24